Հավելված 7[1]
«ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/97»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատերի վերանորոգման աշխատանքների
**ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/97»**

ք. Վանաձոր

«11» 11 2025թ.

«Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Փելեշյանի, որը գործում է «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էլիտ Արման Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Զարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատերի վերանորոգման աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

---

[1] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[2]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը սահմանված է ...*

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[3]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

---

[3] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե ...*

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 11999910 (տասնմեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամ, որից 1999985 (մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[4]

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:[5]

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

---

[4] 5.1.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր

[5] Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

[6] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[7] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[8].

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինհրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման բացակայություն | Տուգանք - Պայմանագրի գումարի 0,5% -ի չափով |
| 2 | Շինարարական աղբի տեղափոխում | Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ » օրենսգրքի 43.1–րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ ենթակետերի համաձայն՝ տուգանք- (մինչև 1 խմ- 80 000 ՀՀ դրամ, 1խմ-ից ավել-200000 ՀՀ դրամ) |
| 3 | Աշխատանքների կատարման ժամանակացույցի խախտում | Ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար սահմանել 0.1% չափով տույժ չկատարված աշխատանքների համար: |
| 4 | Նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների չկատարում | Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծարելու հիմք և տուգանք Պայմանագրի գումարի 5% չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[7] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[8] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է*

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝

(այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:[9]

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 **Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից - 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**[10]

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ**
**ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22**
**Կենտրոնական գանձապետարան**
**ՀՀ 900232158031**
**ՀՎՀՀ 06967534**

------------------------------- **Ա. Փելեշյան**
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Էլիտ Արման Շին» ՍՊԸ
Ք.Գյումրի Մ.Խորենացի 62. բն.87
ՀՎՀՀ՝ 05537917
<<ՀայԷկոնոմբանկ>> ՓԲԸ Գյումրի
ՀՀ՝ 163128055056
Տնօրեն Ա. Զարգարյան

-------------------------------Ա.Զարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ*

---

[9] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

[10] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*
*Սույն կետի 5-րդ ...*

Հավելված թիվ 1
« 11 » 11 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/97» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատի վերանորոգման աշխատանքների ԿԱՏԱՐՄԱՆ

| NN | ·ÝÇ ÑÇÙÁ | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի գին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | ***Հողային աշխատանքներ*** | | | | |
| 1 | 1-961 | բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի բնահողում տեղանքի հարթեցման և մաքրման համար | $մ^3$ | 28.00 | 3.499 | 97.96 |
| 2 | 1-961 | բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի բնահողում հենապատերի հիմքերի կառուցման համար | $մ^3$ | 41.79 | 3.499 | 146.21 |
| 3 | 23-264 | ավելորդ բնահողի տեղափոում սայլակով մինչև 30մ մեխանիզմին մատչելի հատված | տն | 105.01 | 1.434 | 150.55 |
| 4 | 1-1550 | ավելորդ բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | $1000մ^3$ | 0.06563 | 672.968 | 44.17 |
| 5 | Գ130 - 3 | բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 105.01 | 1.539 | 161.60 |
| 6 | 1-968 | ավելորդ բնահողի հետլիցք ձեռքով և փռում տեղում | $մ^3$ | 4.16 | 1.460 | 6.07 |
| | | ***Հենապատի կառուցում*** | | | | |
| 1 | 1-1183 | հիմքերի բնահողի տոփանում | $100մ^2$ | 0.482 | 7.418 | 3.58 |
| 2 | 5-67 | հենապատի հիմքի խճային նախաշերտ 10սմ հաստության | $մ^3$ | 4.82 | 17.594 | 84.80 |
| 3 | 6-20 | ժապավենաձև հիմքերի կառուցում բետոնով B -20 դասի բետոնով | $մ^3$ | 32.69 | 63.805 | 2085.79 |
| 4 | 6-106 | Միաձույլ ե/բ սյուների կառուցում B -20 բետոնով | $մ^3$ | 7.07 | 110.272 | 779.63 |
| 5 | շուկա | Ամրան Φ14A500C | տն | 0.4277 | 446.259 | 190.86 |
| 6 | Շուկա | Ամրան Φ8 A240 | տն | 0.2193 | 383.604 | 84.12 |
| 7 | 6-129 | Միաձույլ բետոնե հենապատի կառուցում B -20 բետոնով | $մ^3$ | 63.6 | 72.267 | 4596.20 |
| 8 | 46-188 գ-0.5 | անցքերի շաղափում խարիսխների տեղադրման համար , Φ12, L-200մմ | 100 հատ | 6.78 | 62.744 | 425.40 |
| 9 | շուկա | խարիսխներ ամրանից Φ8A500C | տն | 0.134 | 383.604 | 51.40 |
| 10 | շուկա | հարթ ցանցի հորիզոնական ձողեր Φ8A500C | տն | 0.58031 | 383.604 | 222.61 |
| 11 | շուկա | հարթ ցանցի ուղղահայաց ձողեր Φ8A500C | տն | 0.7489 | 383.604 | 287.28 |
| 12 | 16-34 | դրենաժային պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ 110 | գծմ | 95.0 | 2.969 | 282.01 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | 8-279 | հենապատի գխանցի երեսապատում ց/թիթեղով 0,55մմ հաստ. | $մ^2$ | 38.91 | 1.499 | 58.34 |
| 14 | շուկա | ց/թիթեղի արժեքը 0,55մմ հաստության | $մ^2$ | 38.91 | 3.733 | 145.26 |
| 15 | 11-98 | հենապատի ց/ավազային սվաղ | $մ^2$ | 216.00 | 2.002 | 432.47 |
| 16 | 15-523 | հենապատի ներկում ճակատային ներկով | $100մ^2$ | 2.16 | 131.725 | 284.53 |
| | | *Ընդամենը* | | | | *10620.85* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *2124.17* |
| | | *Ընդամենը* | | | | *12745.02* |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ**
**ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22**
**Կենտրոնական գանձապետարան**
**ՀՀ 900232158031**
**ՀՎՀՀ 06967534**

----------------------------- **Ա. Փելեշյան**
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Էլիտ Արման Շին» ՍՊԸ
Ք.Գյումրի Մ.Խորենացի 62. բն.87
ՀՎՀՀ՝ 05537917
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ Գյումրի
ՀՀ՝ 163128055056

------------------------- Ա.Զարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 11 » 11 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/97» ծածկագրով պայմանագրի

## Օրացուցային գրաֆիկ

**Վանաձոր համայնքի Այաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատի վերանորոգման աշխատանքների կատարման**

| N ը/կ | Կապալառի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հենապատի կառուցման համար բնահողի քանդում, հիմքերի փորում մեխանիզմով | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2025թ. | 5 օրացույցային օր |
| 2 | Հիմքերի ամրանավորում և բետոնացում | | 10 օրացույցային օր |
| 3 | Ե/բ հենապատի և ե/բ միաձույլ սյուների կառուցում | | 20 օրացույցային օր |
| 4 | Սվաղի և ներկման աշխատանքներ | | 10 օրացույցային օր |
| Ընդամենը | | | Մինչև 25.12.2025թ. |

Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները
Աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների):

*Լիցենզիայի առկայության մասին.* Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պահանջվում է *լիցենզիա քաղաքաշինության բնագավառում*

- շինարարության իրականացում՝ 2-րդ դաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ**
**ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22**
**Կենտրոնական գանձապետարան**
**ՀՀ 900232158031**
**ՀՎՀՀ 06967534**

------------------------------ **Ա. Փելեշյան**
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Էլիտ Արման Շին» ՍՊԸ
Ք.Գյումրի Մ.Խորենացի 62. բն.87
ՀՎՀՀ՝ 05537917
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ Գյումրի
ՀՀ՝ 163128055056

------------------------------Ա.Զարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

** Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*
*** **Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:***

Հավելված N 3
«  » 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/97» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | Աշխատանքի | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 45221142 | Վանաձոր համայնքի Այ աթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատի վերանորոգման աշխատանքների կատարման | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

-----------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

-----------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«      »      20   թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «           » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »     «          » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«      »        20   թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը / Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20   թ. ______________________-ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն